Արցախեան հիմնահարցի սրման այս փուլում աճել է հետաքրքրութիւնը Արցախ-Ղարաբաղի Ռուսաստանին միանալու պատմութեան նկատմամբ։ Ստորև տպագրուող յօդուածը ներկայացնում է այդ իրադարձութիւնների նախապատմութիւնը։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՆԱԽՕՐԷԻՆ

ՍԼԱՒԱ ՍԱՐԳՍԵԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքում (5056 քառ. կմ) ապրում են աւելի քան 190 հազար հայեր։ Դա կազմում է ԼՂՀի բնակչութեան ընդհանուր քանակի 80 տոկոսից աւելին։

Այս փոքրիկ երկրամասի ժողովուրդը դարեր շարունակ պայքարում է օտար նուաճողների դէմ։

17րդ դարում Լեռնային Ղարաբաղը գտնւում էր Պարսկաստանի տիրապետութեան տակ։ Պարսից տիրակալ Շահ Աբասը թուրքերի դէմ պատերազմում իրեն զինական ուժով օգնելու համար Ղարաբաղի ազնուականութեան հինգ ազդեցիկ ներկայացուցիչների շնորհում է «Մելիք» տիտղոսը։ Ստեղծւում են Դիզակի, Վարանդայի, Խաչէնի, Ջրաբերդի եւ Գիւլիստանի մելիքութիւնները (Ներկայիս Հադրութի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի եւ Շահումեանի շրջանները)։

Մելիքները ունէին մեծ իշխանութիւն եւ սեփական բանակ։

1722-23 թուականներին Լեռնային Ղարաբաղը ապստամբութեամբ ազատագրուեց լծից։ Դրան նպաստեցին Պետրոս Ա-ի եւ աֆղանական խանի արշաւանքները, որոնք արագացրին պարսից տէրութեան մասնատումը։

Պարսկական կենտրոնացուած պետութեան տապալման հետեւանքով, նոյն դարի 40ական թուականներին Անդրկովկասում ի յայտ եկան մի շարք առանձին ֆեոդալական կազմաւորումներ՝ խանութիւններ (ինչպէս օրինակ, Բաքուի, Նախիջեւանի, Դերբենդի, Երեւանի, Գանձակի, Ղարաբաղի եւ այլն)։ Աւելի վաղ անկախացած Լեռնային Ղարաբաղի հինգ մելիքութիւնները մտան Ղարաբաղի խանութեան կազմի մէջ։

Մելիքները շահագրգռուած էին, որ անընդմէջ ռազմական յարձակումների ենթարկուող Ղարաբաղը մէկընդմիշտ գտնուի զօրեղ պետութեան պաշտպանութեան տակ։ Այդպիսի պետութիւն այդ ժամանակ կարող էր լինել Ռուսաստանը, որի հովանաւորութեամբ կարելի էր պահպանել իրենց երկրի գոյութիւնը եւ պայքարել թուրքական, պարսկական եւ այլ նուաճողների դէմ։

Պէտք է ասել, որ Ղարաբաղի մելիքները Ռուսաստանի հետ մերձեցման առաջին քայլերը կատարել էին դեռեւս Պետրոս Ա-ի ժամանակ։ Նրանք ձգտում էին օգտագործել ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական հակամարտութիւնները։ Ռուսաստանի հովանաւորութիւնը գերադասւում էր մահմեդականից։

Իր հերթին, Ռուսաստանը ձգտում էր պատնէշ ստեղծել թուրքերի եւ պարսիկների դէմ, իսկ այդ նպատակի համար առաւել յուսալի ուժ համարում էր վրացական եւ հայկական իշխանութիւնները, այդ թւում Ղարաբաղի մելիքութիւնները։

19րդ դարում Ռուսաստանի համար յատուկ նշանակութիւն ստացաւ Լեռնային Ղարաբաղի տարածքը։ Գտնուելով Պարսկաստանի սահմաններին մօտ, այն կարող էր ռազմահենադաշտ ծառայել դէպի Պարսկաստան՝ ռուսական արշաւանքների համար։

Ահա թէ ինչու ռուսական միապետութիւնը, յատկապէս այս ժամանակաշրջանում, նպատակ ունէր ղարաբաղցիներին կողմնորոշել դէպի Ռուսաստանը։ Ընդ որում, օգտագործւում էր նաեւ կրօնական հակամարտութիւնը՝ հայ լուսաւորչականների եւ թուրք ու պարսիկ մահմեդականների միջեւ։

Իշխան Պոտյոմկինը, որին երկու անգամ դիմեցին Ղարաբաղի մելիքները դեռեւս 1783թ. (Ապրիլի 6ին եւ 10ին), հրամայեց կովկասեան զօրքերի գլխաւոր հրամանատար գեներալ Պաւէլ Պոտյոմկինին, որպէսզի նա «փաղաքշի» մելիքներին, նրանց յուսադրի, յայտնելով, որ ռուսական պետութիւնը ցանկութիւն ունի մօտ ժամանակներս աջակցել Ղարաբաղին։

Ռուսական զօրքերի մուտքը Ղարաբաղ նախատեսուած էր 1784թ. գարնանը (Նրանց անհամբերութեամբ էին սպասում մելիքները)։ Սակայն անցաւ մի ամբողջ տարի, իսկ զօրքը չկար։ Ղարաբաղի մելիքները ստիպուած Յովհաննէս կաթողիկոսի հետ միասին, Գանձասարի վանքում հրաւիրեցին խորհրդաժողով (Ներկայ էին նաեւ Էջմիածնի կաթողիկոսութեան ներկայացուցիչները եւ գրեթէ ամբողջ հայ բարձր դասը, բացառութեամբ Վարանդայի (Մելիք Շահնազար) եւ Խաչէնի (Մելիք Ալավերդի) մելիքների, որոնք Ղարաբաղի Իբրահիմ խանի կողմնակիցներ էին)։ Որոշուեց նորից դիմել իշխան Պոտյոմկինին՝ Ղարաբաղ մտցնելու ռուսական զօրքերը։

Չնայած այդ հանդիպման խիստ գաղտնիութեան, այդուհանդերձ նրա բովանդակութիւնը յայտնի դարձաւ թշնամուն՝ մասնաւորապէս Իբրահիմ խանին, որը Շուշիի բերդի այն ժամանակուայ տիրակալն էր։ Գաղտնի խորհրդակցութեան մասնակիցների մէկը՝ Հասան Ջալալեան Ալլահ Ղուլին անմիջապէս մէկնում է Շուշի եւ մանրամասն պատմում Իբրահիմ խանին խորհրդակցութեան որոշումների եւ ձեռք առնելիք միջոցառումների մասին։ Խանը շքեղ ճեւանալով, մելիքներին հրաւիրեց իր մօտ, իբր թէ լուրջ հարցերի շուրջ խորհրդակցելու։ Երբ մելիքները մտան Շուշի, խանը անմիջապէս ձերբակալեց նրանց։ Յետոյ, նրա կարգադրութեամբ թալանուեց Գանձասարի վանքը։ Յովհաննէս կաթողիկոսին նետեցին բանտ, որտեղ նա սպանուեց։

Սակայն Ջրաբերդի եւ Գիւլիստանի մելիքները (Մելիք Մեջլում եւ Մելիք Աբով) երկար չմնացին բանտում։ Շուտով իրենց կողմնակիցների օգնութեամբ նրանք ազատուեցին եւ անմիջապէս մեկնեցին Գանձակ (1787թ.), որտեղ գտնւում էին գեներալ Բուռնաշովը եւ վրաց Հերակլ թագաւորը՝ ռուսական զօրքերով։ Վերջիններս պէտք է յարձակուէին Շուշիի վրայ եւ տապալէին Իբրահիմ խանի իշխանութիւնը։ Բայց նոր ռուս-թուրքական պատերազմը (1787թ.) այդ հնարաւորութիւնը չտուեց։ Ռուսական զօրքերը վերադարձան Թիֆլիս։ Այստեղ են վերադառնում նաեւ Մելիք Մեջլումն ու Մելիք Աբովը, որոնց բանակցութիւնները ռուսական պաշտօնատար անձանց եւ Հերակլ թագաւորի հետ՝ օգնել Ղարաբաղի հայութեանը տապալելու Իբրահիմ խանի իշխանութիւնը, դրական արդիւնք չեն տալիս։ Դեռ աւելին, Հերակլ թագաւորը նամակ ստացաւ Իբրահիմ խանից, որտեղ խանը խնդրում է բանտարկել եւ իրեն յանձնել Թիֆլիսում գտնուող երկու մելիքներին, դրա դիմաց խոստանալով Վրաստանին վերադարձնել 3000 վրացահպատակ ադրբեջանական (թուրք) ընտանիքների, որոնք բնակեցուել էին Ղարաբաղում, Ակերան ամրոցի մօտակայքում (Ներկայիս Խոջալու գիւղում. Ա.Ս.)։

Տեսնելով, որ Հերակլը ցանկանում է իրենց յանձնել Իբրահիմ խանին, հայ մելիքները դիմեցին փախուստի՝ Գանձակի Շահվերդի խանի մօտ, որ Իբրահիմ խանի հակառակորդն էր։

1795թ. գարնանը սկսուեց Աղա Մահմեդ խանի արշաւանքը։ Վերջինս ցանկանում էր նուաճել Ղարաբաղը, Գանձակը, Թիֆլիսը եւ Անդրկովկասի միւս մարզերը։ Իմանալով մելիքների՝ Ռուսաստանի հետ բանակցութիւնների մասին, Աղա Մահմեդ խանը որոշեց իր կողմը գրաւել մելիքներին։ Նրանց հղուած հրամանում խանը պահանջում է ենթարկուել իրեն, դրա դիմաց խոստանալով ոչընչացնել Իբրահիմ խանի իշխանութիւնը եւ վերականգնել մելիքների նախկին իրաւունքները։ Բայց մելիքները (բացառութեամբ մելիք Մեջլումի) չենթարկուեցին նրան։ Ժողովրդի ճնշման տակ, նրանք իրենց ուժերը համախմբեցին Իբրահիմ խանի շուրջը՝ պայքարելու պարսկական արշաւանքների դէմ։

Ջրաբերդի մելիք Մեջլումը ուրիշ հաշիւներ ունէր։ Նա ցանկանում էր տապալել ոչ միայն Իբրահիմ խանին, այլեւ դաս տալ Հերակլ թագաւորին։ Այդ նպատակով մելիքը իր ոչ մեծ զօրքով, միացաւ Աղա Մահմեդ խանին։

Մի փոքրիկ ջոկատ թողնելով Շուշիի մօտ, Աղա Մահմեդ խանը շարժուեց դէպի Թիֆլիս։ Հերակլը պարտութիւն կրեց։ Խանի զօրքերը ութ օր աւերեցին ու թալանեցին քաղաքը (1795թ. Սեպտեմբերին), գերուեց 12 հազար մարդ։

Աղա Մահմեդ խանի արշաւանքը Անդրկովկասում ուժեղացրեց պարսկական ազդեցութիւնը։ Ռուսական շահերին մեծ հարուած հասցուեց։

1796թ. Փետրուարին գեներալ Զուբովը հրաման է ստանում արշաւանք սկսել պարսիկների դէմ։ Կենտրոնացնելով զգալի ուժեր, ռուսական զօրքերը գրաւում են Դերբենդը, Ղուբան, Շամախին, իսկ 1797թ. գարնանը մօտենում են Գանձակի ու Ղարաբաղի սահմաններին։

Սակայն ռուսական զօրքերը դադարեցնում են իրենց յաղթական արշաւանքը՝ ստանալով Ռուսաստան վերադառնալու յանկարծակի հրաման։

1797թ. ամռանը Աղա Մահմեդ խանը նոր արշաւանք ձեռնարկեց դէպի Անդրկովկաս։ Նուաճելով Ղարաբաղը եւ Գանձակը, խանը տեղեկացաւ, որ իր զինակից Մելիք Մեջլումը սպանուել է (1796թ. Ապրիլին Հերակլը վրացական զօրքի, վարձու լեզգիների եւ տեղում մնացած ռուսական զօրքերի մնացորդների հետ միասին եւ Իբրահիմ խանի օգնութեամբ յարձակուեց Գանձակի վրայ, որտեղ էլ սպանուեց Մելիք Մեջլումը)։

Չկարողանալով դիմագրաւել պարսկական զօրքերի առաջխաղացմանը, Իբրահիմ խանը թողեց Շուշիի բերդը եւ ընտանիքով փախաւ իր կանանցից մէկի եղբօր՝ Օմար խանի մօտ, որը աւարների (Դաղստան) խանն էր։ Ղարաբաղը թողեցին նաեւ հինգ մելիքներից երեքը, որոնք տեղափոխուեցին Վրաստան, Բորչալու եւ Լոռի։ Դէպի նշուած շրջաններ է սկսում արտագաղթել նաեւ Ղարաբաղի բնակչութեան զգալի մասը։

Ղարաբաղի ռազմական դրութիւնը յատկապէս 1795-98թթ. հնարաւորութիւն չտուեց գիտակցութեանը զբաղուելու հողագործութեամբ։ 1797թ. երաշտը ոչընչացրեց բերքը։ Սարսափելի սովին աւելացաւ ժանտախտը (1798թ.)։ Մասսայական բնոյթ ստացաւ բնակչութեան արտագաղթը Թուրքիա, Պարսկաստան եւ յատկապէս Վրաստան։

(Շարունակելի)